

ք. Երևան

«-----» ----- 2011թ.

ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Կ. Իսախանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից՝ և «Տումոն» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Դ. Բախտամյանի (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

### 1. Պայմանագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված տեսակի **տնտեսական ապրանքներ** (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

1.2 Ապրանքի մատակարարումն սկսվում է 2011 թվականի փետրվարից, և իրականացվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցին համապատասխան:

1.3 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին:

### 2. Ապրանքի գինը և վճարման կարգը

2.1 Սույն պայմանագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի գինը, ներառյալ ԱԱՀ-ն, կազմում է 228.35 հազար դրամ: Գինը ներառում է Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով հաշիվ-ապրանքագրի և հանձնման-ընդունման արձանագրության (ձև N 4) հիման վրա սույն պայմանագրի N 3 հավելվածին՝ վճարման ժամանակացույցին համապատասխան:

### 3. Այլ պայմաններ

3.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի միջև պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Կողմերը սահմանում են, որ սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում են Պետական գնումների գործակալության և Վաճառողի միջև 2010 թվականի մայիսին կնքված N ՊԱՊՁԲ-10/11-1 գնման նախնական պայմանագրով հաստատված օրինակելի պայմանագրի դրույթները:

3.3 Սույն պայմանագիրը և հավելվածները կազմված են յոթ էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

#### 4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Գ Ն Ո Ր Դ

ՀՀ տարածքային կառավարման  
նախարարություն  
ք. Երևան, Կառավարական տուն 2  
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն  
Հ/Հ 900011003150, 900011003168  
ՀՎՀՀ 02578338

-----  
(ստորագրություն)  
Կ.Տ

Մ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ր

«Տումոե» ՍՊԸ  
ք. Երևան, Անդրանիկի 4/8,  
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ  
Հ/Հ 1930003692910100  
ՀՎՀՀ 00441106

-----  
(ստորագրություն)  
Կ.Տ